ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.

Վարդան Չիլինգարյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության փորձագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Օլոմոուց, Չեխիայի Հանրապետություն, 20.10.21-22.10.21թթ.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում).

Չեխիայի արդյունաբերության և առևտրի նախարարություն և «Բալուս» ընկերություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Ստեփանավանի օդանավակայանի վերանորոգման հարցը քննարկելու, ինչպես նաև նոր տիպի ինքնաթիռների արտադրությանը տեղում ծանոթանալու նպատակով:

6. Քննարկված թեմաները (հարցերը).

Քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում թեթև ինքնաթիռների արտադրության և Ստեփանավանի օդանավակայանի վերանորոգման հետ կապված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները.

Տեղի է ունեցել հանդիպում «Մերլին» և «Դաստի» տիպի թեթև ինքնաթիռների արտադրության գլխավոր ինժեներ Մարտին Կոչատկոյի հետ, ով ներկայացրեց օդանավերի արտադրության գործարանը, ծանոթացրեց արտադրության գործընթացին, կիրառվող տեխնոլոգիաներին և արտադրության տարածքներին: Ներկայացվել է նաև արտադրության մանրակրկիտ հսկման համակարգը, որի հիմքում դրված էր յուրաքանչյուր դետալի նույնականացման տեխնոլոգիան՝ QR-կոդի միջոցով: Ներկայացվել է նաև արտադրվող օդանավերի փորձարկման համակարգը և համապատասխան սրահները:

Այնուհետև տեղի է ունեցել «Բալուս» ընկերության հետ հանդիպում, որի ընթացքում քննարկվել է օդանավերի ատադրության տեղափոխումը Ստեփանավան քաղաք: Նախատեսվում է Ստեփանավանում օդանավերի արտադրությունը հայկական «AM Pro Avia» ընկերության հետ համատեղ իրականացնել փուլային տարբերակով, որի տևողությունը ըստ «Բալուս» ընկերության հաշվարկների կկազմի մոտ 5 տարի: Քննարկվել է նաև տեղում հայ մասնագետների վերապատրաստման հետ կապված հարցերը:

Հանդիպում է տեղի ունեցել նաև «Cutter Systems» ընկերության ղեկավար Մարտին Ռժեզաչի հետ, վերջինիս ընկերությունը զբաղվում է ռադիոնավիագացիոն սարքերի և դրանց ծրագրային ապահովման արտադրությամբ: Նշված ընկերությունը մասնագիտացված է բժշկական, ավտոմոբիլային, հանքաարդյունաբերական,

զինվորական և կենցաղային ոլորտներում ավտոմատացված համակարգերի արտադրությունում: Քննարկվել է «Cutter Systems», «Բալուս» և «AM Pro Avia» ընկերությունների համագործակցության հետ կապված հարցեր, մասնավորապես՝ Ստեփանավանում օդանավերի արտադրության նախագծի վերաբերյալ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ չեխական «Բալուս» և հայկական «AM Pro Avia» ընկերությունները երկամսյա ժամկետում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն կներկայացնեն Ստեփանավանում օդանավերի արտադրության և օդանավակայանի վերանորոգման նախագիծը՝ համատեղ քննարկման նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ստեփանավանում օդանավերի արտադրության և օդանավակայանի վերանորոգման նախագիծը ուսումնասիրելուց և հավանություն տալուց հետո շահագրգիռ գերատեսչություններին կներկայացվի համապատասխան տեղեկատվություն և առաջարկ:

Գործուղվող *Վարդան Չիլինգարյան*
25.10.2021